

ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 158-Ա

26 հունիսի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հունիսի 19-ի 319-Ա հրամանի հիման վրա 2020 թվականի հունիսի 25-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝

- 1) «Օլիվեստա» ՍՊԸ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան 60/1 (ՀՎՀՀ 00076917).
- 2) «Զիս» ՍՊԸ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան 110 (ՀՎՀՀ 01279285).
- 3) Ա/Ձ «Գոռ Թովմասյան», ք.Երևան, Անդրանիկի 129, 14 (ՀՎՀՀ 32460832).
- 4) Ա/Ձ «Արմեն Առաքելյան», ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շերամի 2/5 (ՀՎՀՀ 52155189).
- 5) «Անի-Էդգար» ՍՊԸ, ք.Երևան, Րաֆֆու 17 (ՀՎՀՀ 05540748).
- 6) Ա/Ձ «Սուրեն Պետրոսյան», ք.Երևան, Լենինգրադյան 1/1 (ՀՎՀՀ 32552177).
- 7) Ա/Ձ «Արմեն Արշակյան», ք.Երևան, Սեբաստիա և Շահումյան 4փ. հատման մաս (ՀՎՀՀ 32416715).
- 8) «Մարկադէ» ՍՊԸ, ք.Երևան, Սեբաստիա 140/2 (ՀՎՀՀ 09216938):

2. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 26/06/20 16:17:09 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ